Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 23-ի N 1726 - Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ո Ւ Մ

2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՆՀԱՅ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ՝ «ԲԱՐԵԿԵՑԻԿ ԿՅԱՆՔ, ԲԱՐԵԿԵՑԻԿ ՔԱՂԱՔԵ ԽՈՐԱԳՐՈՎ ՇԱՆՀԱՅ ԷՔՍՊՈ 2010 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Աշխատանքների նկարագիրը	Նախատեսվող ժամկետը	Պատասխանատու կատարողը	Աշխատանքի կատարման վիճակը
1	2	3	4	5	6
		ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ			
1.	Ազգային օրվա հայտի ներկայացում կազմակերպիչներին	Ցուցահանդեսի ընթացքում Հայաստանի ազգային օրվա անցկացման համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ կազմակերպիչներին, որում կնշվի նախընտրելի ժամկետը: Հայաստանի ազգային օրվա համար ներկայացվել է առաջարկություն անցկացնել այն 2010 թ. սեպտեմբերի 21-ին:	2009 թ. 1-ի եռամսյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ	կատարված է
2.	Հայաստանյան մասնակցության հայեցակարգի մշակում	Կմշակվի հայաստանյան մասնակցության հայեցակարգը, որը հիմք կհանդիսանա ցուցահանդեսին մասնակցության խորագրի ներկայացմանը: Ստեղծագործական խումբը կնախագծի տաղավարը՝ ըստ մշակված հայեցակարգի:	2009 թ. 1-ին և 2-րդ եռամսյակներ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ Կազմակերպչական կոմիտե	կատարված է
3.	Տեղեկատվության և	Զարգացման հայկա-			

1	2	3	4	5	6
	համագործակցության մասին նամակ-առաջարկ կազմակերպություններին	կան գործակալության կողմից կուղարկվեն նամակներ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար, ինչպես նաև կոմերցիոն մասի կազմակերպման մասին:	2009 թ. 1-ին և 2-րդ եռամսյակներ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ	կատարված է
4.	Մասնակցության պայմանագրի ներկայացում ՀՀ կառավարություն՝ հաստատելու նպատակով	Չինական կողմից ստացված մասնակցության պայմանագրի ձևի հիման վրա կլրամշակվի հայաստանյան մասնակցության պայմանագիրը, որը կուղարկվի ՀՀ կառավարություն՝ հավանություն ստանալու նպատակով:	2009 թ. 1-ին և 2- րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	կատարված է
5.	Կոմերցիոն մասի կազմակերպում	Կոմերցիոն մասով նախատեսվում է Կազմակերպչական կոմիտեի ներկայացմամբ տարբեր միջոցառումների կազմակերպում, որոնք կխթանեն և կաջակցեն կոմերցիոն մասի գործունեությանը: ԶՀԳ-ն և «Արմենիան Սեքշըն օֆ Էքսպո 2010ե ընկերությունը համատեղ կֆինանսավորեն այդ միջոցառումները:	2009 թ. 4-րդ եռամսյակ 2010 թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ «Արմենիա Սեքշըն օֆ Էքսպո 2010ե ընկերություն Կազմակերպչական կոմիտե	կատարված է
6.	Հաստատված մասնակցության պայմանագրի կնքում կազմակերպիչների հետ	ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնակցության պայմանագիրը կկնքվի կազմակերպիչների հետ:	2009 թ. 2-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	կատարված է
7.	Տաղավարի նախագծում	Կնախագծվի ՀՀ տաղավարը, կկատարվեն դիզայներական մշակումները, կհաստատվի էքսպոզիցիան, տաղավարը կներկայացվի 3-Դ անիմացիայի միջոցով: Ընտրված ճարտարապետական ընկերության կողմից կպատրաստվի և կթարգմանվի չիներեն նախագծի կառուցապատման և ձևավորման պլանը:	2009 թ. 3-րդ եռամսյակ	Կազմակերպչական կոմիտե «Արմենիա Սեքշըն օֆ Էքսպո 2010ե ընկերություն	կատարված է
8.	Չինական կողմին ֆինանսական աջակցության հայտի	Պայմանագիրը կնքելուց հետո	2009 թ. 2-րդ	«Զարգացման հայկական	կատարված է

1	2	3	4	5	6
	ներկայացում	բանակցություններ կվարվեն չինական կողմի հետ և կներկայացվի ֆինանսական աջակցության հայտ:	եռամսյակ	գործակալությունե ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	
9.	Ցուցահանդեսի կազմակեր-պիչների կողմից արտո-նագրված ընկերության ընտրություն	ՀՀ տաղավարի ներքին հարդարանքը պետք է իրականացնի կազմակերպիչների կողմից արտոնագրված ընկերություններից մեկը, որի ընտրու-թյունն էլ կկատարվի մրցույթի միջոցով:	2009 թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ Կազմակերպչական կոմիտե «Արմենիա Սեքշըն օֆ Էքսպո 2010ե ընկերություն	կատարված է
10.	Ցուցահանդեսի գովազդային նյութերի պատրաստում և ձեռքբերում	Կազմակերպչական կոմիտեի կողմից կներկայացվեն այն ընկերությունները, որոնցից կպահանջվի հետևյալը՝ հուշանվեր-ների պատրաստում, Հայաստանը ներկա-յացնող գրքերի, ամսագրերի, ազգային օրվա հրավիրատոմ-սերի, թռուցիկների, թղթապանակների և այլ անհրաժեշտ նյութերի պատրաս-տում և տպագրում, Հայաստանը գովազ-դող վերնաշապիկների և Հայաստանի մասին տեսահոլովակի ստեղծում	2010 թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ Կազմակերպչական կոմիտե «Արմենիա Սեքշըն օֆ Էքսպո 2010ե ընկերություն	կատարված է
11.	ՀՀ տաղավարի ցուցանմուշների և դեկորացիաների ձեռքբերում ընտրված ընկերություններից	Կազմակերպչական կոմիտեի կողմից ընտրված ընկերու-թյունները կիրակա-նացնեն ՀՀ տաղա-վարում ցուցադրվե-լիք ցուցանմուշների, թեմատիկ դեկորա-ցիաների պատվի-րում և ձեռքբերում, ինչպես նաև Հայաս-տանը, Հայկական տաղավարը և Աշխար-հի քաղաքը ներկա-յացնող կայքերի և համակարգերի պատրաստում և արդիականացում: Դրանք պետք է համապատասխանեն ՀՀ տաղավարի ընդ-հանուր թեմատիկային:	2010 թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ Կազմակերպչական կոմիտե «Արմենիա Սեքշըն օֆ Էքսպո 2010ե ընկերություն	կատարված է

1	2	3	4	5	6
12.	Ցուցանմուշների և այլ անհրաժեշտ պարագաների տեղափոխում ցուցահանդես	Ձեռք բերված նյութերը և դեկորացիաները կհավաքագրվեն, կփաթեթավորվեն, ընտրված ընկերության կողմից կմաքսա-վորվեն Հայաստանում, կառաքվեն, կմաքսազերծվեն Չինաստանում, կառաքվեն ցուցա-հանդես, կպահեստա-վորվեն ցուցահանդեսի տարածքում: Ցուցահանդեսի հետ կապված փաս-տաթղթերը կուղարկ-վեն և կառաքվեն՝ կմատուցվի սուրհան-դակային և փոստային ծառայություն:	2009թ 4-րդ եռամսյակ 2010 թ. 1-ին 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ	«Զարգացման հայկական գործակալություն ՓԲԸ «Արմենիա Սեքշընօֆ Էքսպո 2010ե ընկերություն	կատարված է
13.	ՀՀ տաղավարի ներքին հարդարանք և դեկորացիա-ների տեղադրում	Կազմակերպչական կոմիտեի կողմից ընտրված արտո-նագրված ընկերու-թյունների կողմից կիրականացվի ՀՀ տաղավարի ներքին հարդարանքը և դեկորացիաների տեղադրումը՝ կազմակերպչական կոմիտեի կողմից ներկայացված նա-խագծի հիման վրա:	2009 թ. 4-րդ եռամսյակ 2010 թ. 1-ին և 2-րդ եռամսյակներ	«Զարգացման հայկական գործակալություն ՓԲԸ Կազմակերպչական կոմիտե «Արմենիա Սեքշընօֆ Էքսպո 2010ե ընկերություն	կատարված է
14.	Մուլտիմեդիա ծրագրի պատվիրում	Տաղավարում առկա տեղեկատվական ակտիվ էկրանների (touch screen) մրցութային կարգով ընտրված ընկերու-թյունից կպատվիրվեն համապատասխան համակարգչային ծրագրեր, որոնք էլեկտրոնային ձևով կներկայացնեն ՀՀ տաղավարը և Հայաստանը:	2009 թ. 4-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալություն ՓԲԸ «Արմենիա Սեքշընօֆ Էքսպո 2010ե ընկերություն Կազմակերպչական կոմիտե	կատարված է
15.	Տաղավարի նախապատ-	ՀՀ տաղավարի շինա-	2009 թ.	«Զարգացման	կատարված է

1	2	3	4	5	6
	բաստման նպատակով աշխատողների գործուղում Շանհայ	բարության ընթացքի վերահսկման համար կապալառու ընկե-րությունների հետ բանակցությունների իրականացման նպատակով ԶՀԳ-ի աշխատողներն ու կազմակերպչական կոմիտեի անդամ-ները կգործուղվեն Շանհայ:	4-րդ եռամսյակ 2010 թ. 1-ին և 2-րդ եռամսյակներ	հայկական գործակալությունե ՓԲԸ Կազմակերպչական կոմիտե	
16.	Գույքի ապահովագրություն	Ցուցահանդեսի անցկացման ժամա-նակահատվածում ցուցադրվելիք գույքն ապահովագրվելու է կազմակերպիչների կողմից արտո-նագրված ընկերության կողմից:	2010 թ. 4-րդ եռամսյակ	«Արմենիա Սեքշընն օֆ Էքսպո 2010ե ընկերություն	կատարված է
17.	Տաղավարի ենթակա-ռուցվածքի ձեռքբերում և մոնտաժում/ տեխնիկական հագեցվածության ապահովում	Ընտրված ընկերու-թյան կողմից կիրա-կանացվեն հետևյալ աշխատանքները՝ օդափոխության համակարգի մոնտաժում և համա-պատասխան պարա-գաների ձեռքբերում, գրասենյակի կահա-վորման և սարքա-վորումների ձեռք-բերում, մոնտաժում և ապամոնտաժում, ջրի և կոյուղու համակարգերի մոնտաժում, էլեկտրականության, հեռահաղորդակցա-կան ցանցի և անվտանգության համակարգերի մոնտաժում և համա-պատասխան պարա-գաների ձեռքբերում, մուլտիմեդիա համա-կարգի, ձայնային համակարգի, լուսա-վորության համա-կարգի և վիդեոհա-մակարգի ձեռբերում և մոնտաժում:	2010 թ. 1-ին և 2-րդ եռամսյակներ	«Արմենիա Սեքշընն օֆ Էքսպո 2010ե ընկերություն	կատարված է
ԷՔՍՊՈ-2010 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ					
18.	Սպասարկող անձնակազմի	Հայաստանի տաղա-վարում աշխատանք-	2010 թ.	«Զարգացման	կատարված է

1	2	3	4	5	6
	գործուղում ցուցահանդես	ների իրականացման, համակարգման վերահսկողության նպատակով նախատեսվում է ՀՀ վարչապետի խորհրդականի գործուղում, ինչպես նաև ԶՀԳ-ի, կազմակերպչական կոմիտեի աշխատողների, 2 ֆրանսիացի մասնագետների գործուղում ցուցահանդեսի անցկացման ընթացքում՝ 44 անձի հաշվարկով (օրապահիկ, գիշերավարձ, ավիատոմսեր):	ընթացքում	հայկական գործակալություններ ՓԲԸ Կազմակերպչական կոմիտե	
19.	Ընթացիկ աշխատանքներ	Տաղավարի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտություն կա վարձել համապատասխան մասնագետներ՝ 2 մասնագետ, որոնք կաշխատեն ցուցահանդեսի նախապատրաստման և ամբողջ ցուցահանդեսի ընթացքում, 8 թարգմանիչ և 6 սպասարկող անձնակազմ, ինչպես նաև կազմկոմիտեի 5 անդամ և Կազմկոմիտեի կողմից ընտրված 6 մասնագետ, որոնք կաշխատեն հերթափոխով՝ ամբողջ ցուցահանդեսի ընթացքում): Կիրականացվեն նաև տաղավարի շահագործման համար անհրաժեշտ ընթացիկ վճարումներ, դրանք են՝ էլեկտրաէներգիայի վճար, ջրմուղ-կոյուղու վճար, հեռահաղորդակցության վճար, աղբահանության վճար, անվտանգության և սանիտարական աշխատանքների վճար, ինչպես նաև տաղավարի շահագործում և դրանից բխող աշխատանքների իրականացում՝ ցուցահանդեսի ընթացքում:	2009 թ. 4-րդ եռամսյակ 2010 թ. ընթացքում	«Զարգացման հայկական գործակալություններ ՓԲԸ «Արմենիա Սեքշընս օֆ Էքսպո 2010ե ընկերություն Կազմակերպչական կոմիտե	կատարված է
20.	Ցուցահանդեսի ընթացքում Հայաստանի ազգային օրվա անցկացում	Ցուցահանդեսի անցկացման ընթացքում նախատեսվում է անցկացնել Հայաստանի ազգային օր,	2010 թ. 3-րդ եռամսյակ	ՀՀ մշակույթի նախարարություն	

1	2	3	4	5	6
		որն ըստ նախնական պայմանավորվածության կանցկացվի 2010 թ. սեպտեմբերի 21-ին: Օրը պատշաճ անցկացնելու նպատակով Հայաստանից ցուցահանդես կգործուղվեն ստեղծագործական համույթներ, ինչպես նաև կիրականացվի ՀՀ պաշտոնական պատվիրակության ընդունելություն: Սեպտեմբերի 21-ին նախատեսվում է կազմակերպել տոնական ֆուրշետ, որտեղ հյուրերը կճաշակեն հայկական ուտեստներ և կկազմակերպվեն ներկայացումներ: Կնկարահանվի ֆիլմ Ազգային օրվա վերաբերյալ, ինչպես նաև նախօրոք նկարահանված տեսահոլովակները կցուցադրվեն այդ օրը:		«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ Կազմակերպչական կոմիտե «Արմենիա Սեքշընն օֆ Էքսպո 2010ե ընկերություն	Կատարված է
21.	Հայաստանյան մասնակցության ազգային օպերատորի գլխավորությամբ անկախ փորձագետի և կազմակերպիչների կողմից համապատասխան փաստաթղթերի ստորագրում, ցուցահանդեսի փակում	ԶՀԳ-ի կողմից կազմակերպիչների հետ միասին կիրականացվեն ցուցահանդեսի կատարողական ակտերի ստորագրման գործընթացները:	2010 թ. 4-րդ եռամսյակ	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ	
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ					
22.	Ցուցահանդեսի ավարտից հետո տաղավարի ապամոնտաժում	Ցուցահանդեսի փակումից հետո կիրականացվեն տաղավարի ապամոնտաժում, գույքի փաթեթավորում, մաքսային ձևակերպումներ և տեղափոխում Հայաստան:	2010 թ. 4-րդ եռամսյակ	«Արմենիա Սեքշընն օֆ Էքսպո 2010ե ընկերություն	
ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱԽՍԵՐ					
23.	Չնախատեսված ծախսեր		2009-2010 թթ. ընթացքում	«Զարգացման հայկական գործակալությունե ՓԲԸ «Արմենիա	

1	2	3	4	5	6
				Սեքշըն օֆ էքսպո 2010ե ընկերություն Կազմակերպչական կոմիտե	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ